ԱԶԳԱՑԻՆ

ԳՈՑՔ ԿՈՒՍԱԿՐՕՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ։

Երդէն յայտնի է որ ի 1836 թուականին հաստատեալ Կանոնադրութեամբ՝ Ռուսաստանի Հայոց կուսակրօն հոգևորականաց գոյքը՝ զկնի մահուան՝ եթէ չունենային կտակ, կենային յօգուտ և ի ժառանգութիւն ազգականացն, որով մեծ վնաս և զրկանք կ՚կրէին թէ Մայր Աթոռս և թէ Վանօրայք։

Ո՞վ չ՚գիտէր՝ թէ հոգևորականաց ունեցած բոլոր ստացուածքը գրեթէ Եկեղեցիէն և զայնս կազմող ժողովուրդէն է. ո՞վ չգիտէր, զի ի հնումն ժողովուրդն համոզուած լինելով՝ թէ զոր ինչ նուիրեն վանականաց և բարձրաստիճան Եկեղեցականաց, մեծաւ մասամբ աստուածահաճոյ և ազգօգուտ ձեռնարկութեանց կը գործածուին՝ և ըստ որում անորդիք՝ զկնի մահուան անշուշտ կրնան յօգուտ վանօրէից, որով ամեն կերպիւ վստահ և լի ջերմեռանդութեամբ կը մատուցանէին իւրեանց հոգևոր տուրքերը։ Բայց մի ժամանակէ հետէ մնալով ժառանգութիւն ազգականացն՝ ոչ միայն հանգուցելոց գոյքը՝ այլ և երբեմն ի ժողովրդոց նուիրեալ արդիւնքներ որ վասն բարեպաշտական շինուածոց, և կամ յարգեանցն յանուն Մայր Աթոռոյս քաղելոց ի նոցանէ, յետ անակնկալ կամ յանկարծահաս վախճանի նոցին՝ ըստ զօրութեան յիշեալ Կանոնադրութեանն՝ անխիղճ ազգականացն որս կը լինէր յանիրաւի, որք իբրու օրինաւոր ժառանգք կը տքնէին և ամեն միջոց կը հնարէին ի դատաստանատեղիս յաղագս ի ձեռս բերելոյ զայնոսիկ՝ ի ցաւ սրտի ամեն ճշմարիտ ազգասէր Եկեղեցականաց և աշխարհականաց, հետևաբար ժողովուրդն օր քան զօր կը սառնանայր յառաստուրս կուսակրօն Եկեղեցականաց։

Ուստի Նորին Ս. Օծութիւն Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Դ՝ զկնի օծմանն ի Հայրապետութիւն ամենայն Հայոց՝ տարով զանձն օրինակ, առաջարկեց Միաբանութեան Մայր Վանուցս, և նոքա մի ուխտ պայմանի ստորագրեցին յօժարութեամբ, որ հրատարակեալ է Բարատ ամսագրոյ Ա. շրջանի Մայիս ամսագրոյ մէջ։ Եւ ապա՝ Կաթողիկոսաց և ամենայն Կուսակրօն Եկեղեցականաց յետ վախճանի ի գործ դրուելիք երկու յօդուածները փոխելոյ ազագաւ առաջարկեց՝ և Օգոստ. Կայսրն ամենայն Ռուսաց հաճեցաւ ընդունել Սրբազնագոյն Հայրապետիս առաջարկութիւնը, և Կայսերական հրովարտակաւ (ընդհ. թիւ օրինագրոց) 1015 և 16 յօդուածները փոխեցան, զորոց օրինակն ահաւասիկ կը հրատարակեմք ի տեղեկութիւն ազգայնոց։

Յօդ. 1015։ Զկնի վախճանի Պատրիարք-Կաթողիկոսաց ամենայն Հայոց, թեմական-Առաջնորդաց Եկեղեցւոյ Հայոց և Փոխանորդաց նոցա, եթէ չունիցին նոքա արտաքին զկտակ յօգուտ Աստուածահաճոյ շինուածոց, գոյք նոցա համարին սեպհականութիւն Վանիցն Եջմիածնի. հսկողութիւն ի վերայ այնպիսի գոյից յանձն լինի Հոգևոր Տեսչութեանց։

Յօդ. 1016։ Գոյք մնացեալք յետ վախճանի Վանահարց, Մայրապետաց վանօրէից Հայոց և առհասարակ Կուսակրօն հոգևորականութեան, մնան յօգուտ նոյն մենաստանի, որոյ ի կարգի միաբանութեան դասանիցին նոքա, եթէ չիցէ նոցա արտաքին զկտակաւանդութիւն յօգուտ Աստուածահաճոյ շինուածոց։

ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ

ԹՈՒՇՄԱԼԵԱՆՑ։

Մոզդոկ քաղաքէն կհաղորդեն մեզ, թէ աղնուուհի և բարեպաշտուհի տիկին Մարիամ Գրիգ. Թուշմալեանց՝ - հանգոյն հանգուցեալ բարեհամբաւ ամուսնոյն Գրիգորի Թուշմալեանց՝ որ ի Մոզդոկ մի Ազգ. Հոգև. դպրոց շինած է իւր արդեամբք, որով և բարերար հանդիսացած է մերազնեայ մանկտւոյն, - մտադիր եղած է Մայր

Աթոռոյս Նորակառոյց Ճեմարանիս ի Նը պաստ տասն հազար ռուբ. կտակել ի յիշատակս իրեալ որդւոյն իւրոյ Վերովբէի Թուշմալեանց հանգուցելոյ առ 8էր, նոյն գումարի տոկոսով և Թուշմալեանց անուամբ հոգևոր որդեգիր պահելու բաղձանօք։

Նոյն բարեհամբաւ տիկնոջ առաքինասէր և բարեգործ արդիւնքները ոչ սակաւ լինելով, — յորոց մինն է՝ ինչպէս Դեկտ. 31ին գրած էր մեզ ի Մողոկէ Խարեկր. Յովհ. Աւագ քահանայ Խոսրովեանց՝ ի տօնավաճառէն Նիժնայի բերել տուած 130 փթանոց և 2000 մանէթէն աւելի արժողութեամբ մեծ զանգակը, որ նոյն ամսոյ 29ին փառաւոր հանդիսիւ զետեղեալ է ի զանգակատան Ս. Աստուածածին Աւագ Եկեղեցւոյ տեղւոյն, — անշուշտ եմք՝ զի յիշեալ տիկնոջ առաքինասէր ըղձանաց երախտիքը անմոռաց յիշատակ կրկանգնէ նաև մեր Նորակառոյց Ճեմարանիս վերայ նոյն բարի նպատակին իրագործուելով, որոյ համար կրաղձամք յետ սակաւուց ստոյգը աւետել մեր Աղգայնոց հանդերձ շնորհակալութեամբ։

ԽԱԼԻՊԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՑԻ ՎԱԽՃԱՆԵԼԸ.

Նոր Նախիջևան քաղաքը զրկուեցաւ Ապրիլի 24ին իւր գերահռչակ և աղգասէր իշխանաւորաց մէկէն, որ էր Աղա Յարութիւն Պօղոսեան Խալիպեանց։ Այս ութսուն և հինգամեայ ծերունին իւր անձնական սակաւագիւտ կատարելութիւններովը բոլոր կենացը մէջ մեծ ազդեցութիւն ունեցած էր այն քաղաքին և շրջակայից բնակիչներուն և գործերուն վրայ. որով մինչև վերջը մեծարոյ և պատուելի հանդիսացած էր ոչ միայն ազգայնոց, այլ և օտարազգի մեծամեծաց և ժողովրդոց առհասարակ։ Նախիջևանցիք հինգ վեց անգամ ընտրած էին զինքը իրենց Քաղաքագլուխ (Հօլվա), ուստի և 15 տարի կառավարեց նա այն քաղաքը ու քովի գեղերը, անաչառ, հեռատես, երկայնամիտ և խոհական կառավարութեամբ։ Նուիրեպէտ ի ծերութեան հասակին չկամեցաւ այլ ևս շարունակել այն պաշտօնը, բայց իւր քաղաքակիցքը չէին դադարիր նորա հանձարոյն և փորձառութեանը դիմելէն՝ մինչև կենացը վերջին ժամանակներն անգամ։

Խալիպեան իշխանին բնատուր ձիրքերը, արթուն վաճառաշահութիւնը, անխոնջ աշխատասիրութիւնը, պատուաւոր յարաբերութիւնները, և մանաւանդ հաստատուն բարեպաշտութիւնը և աղգասէր առատաձեռնութիւնը, պատրաստեցին իրեն այն հարստութիւնը՝ որով Ռուսաստանի Հայոց առաջին մեծատուններէն մէկը եղած էր. բայց ինքը ասով ըստ իմիք աւելի ևս գերազանցեց քան զբազում մեծատուն՝ որ դիտցաւ իւր հարստութեան նշանաւոր մէկ մասը ի գործ դընել յօգուտ հասարակաց, մանաւանդ իւր աղգայնոց։

Յայտնի է ամենուն՝ որ այս բարեյիշատակ իշխանը մեծագումար օժանդակութեամբ գործակից եղաւ Խրիմու Թէոդոսիա քաղաքին մէջ Աղգային ուսումնարան բացուելուն և յառաջանալուն 1858էն մինչև այս տարի։ Անկից ելած հարիւրաւոր աշակերտք, ցրուած են այժմ Ռուսաստանի գրեթէ ամենայն գլխաւոր քաղաքները, իրենց գովելի ընթացքովը կենդանի վկայք են և անժխտելի ապացոյցք նոյն ուսումնարանին օգտաւէտութեանը։

Խալիպեան Յարութիւն Աղայն վախճանեցաւ Թայղան (Թականրոկ) քաղաքը իւր տանը մէջ. երկրորդ օրը՝ բազմութեամբ աղգային եկեղեցականաց և իշխանաւորաց, որ եկեր էին Նախիջևա-